

4. ՀՀ 2011Թ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ ՈՐՊԵՄ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Մարդահամարի անցկացումն իրենից ներկայացնում է բազմաբնույթ և իրար հաջորդող, փոխկապակցված միջոցառումների շարք, որոնց իրականացումն առնչվում է կառավարության, տարբեր նախարարությունների, գերատեսչությունների ու կազմակերպությունների անմիջական մասնակցության հետ: Այդ պատճառով, ինչպես նաև «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի հոդված 4 և ՀՀ կառավարության 2009թ. մարտի 26-ի թիվ 301-Ն որոշման համաձայն, ստեղծվեցին 2011թ. մարդահամարի կազմակերպման ու անցկացման համապետական, մարզային և Երևանի քաղաքային հանձնաժողովները:

ՀՀ 2011 թ. մարդահամարի կազմակերպման և անցկացման համապետական հանձնաժողովի առաջին նիստի որոշմամբ հավանության արժանացավ «ՀՀ 2011 թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի նախահաշիվը»:

Պարբերաբար հրավիրվող համապետական հանձնաժողովի նիստերին քննարկվել են ՀՀ 2011թ. մարդահամարի կազմակերպմանն առնչվող հարցեր, ընդունվել որոշումներ, հավանության արժանացվել փաստաթղթեր, առաջարկություններ ներկայացվել ՀՀ մարզպետարաններին և տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՀՀ 2011թ. մարդահամարի կազմակերպման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահ, ՀՀ փոխվարչապետ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարի նախաձեռնությամբ և հանձնարարականով մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում ՀՀ ԱՎԾ-ի կողմից կազմակերպվել և անցկացվել են հանդիպումներ հանրապետության բոլոր համայնքների ղեկավարների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են մարդահամարի անցկացման անհրաժեշտության հետ կապված խնդիրներ, տրվել են անհրաժեշտ մեթոդաբանական պարզաբանումներ, ինչպես նաև համայնքների ղեկավարներին են ներկայացվել իրենց օժանդակությանը սպասող հետևյալ խնդիրները.

- քաղաքներում և խոշոր գյուղերում հասցեային տնտեսության կարգավորումը,
- մարդահամարի և հրահանգչական տեղամասերի համար ժամանակավորապես աշխատասենյակների տրամադրումը՝ համապատասխանաբար երկուսուկես և մեկուկես ամիս ժամկետով,
- հաշվարարների թեկնածուների ներկայացումը համայնքի բնակիչներից:



ՀՀ 2011թ. մարդահամարի աջակցության շրջանակում համաձայնագրեր (նախագծեր) են կնքվել (հաստատվել) Նորվեգիայի կառավարության, Շվեյցարիայի Դաշնային կառավարության, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի, Հնդկաստանի կառավարության, Իտալիայի կառավարության հետ՝ ֆինանսական աջակցության, իսկ Հնդկաստանի կառավարության հետ՝ համակարգչային տեխնիկայի անհատույց տրամադրման համար:

Փորձնական մարդահամարի նախապատրաստման, անցկացման և տվյալների մշակման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների և/կամ բացթողումների հիման վրա վերանայվեցին մարդահամարի նախապատրաստման ու անցկացման գործընթացները կանոնակարգող հիմնական փաստաթղթերը, դրանք ՀՀ ՎՊԽ որոշումներով հաստատվեցին և որպես նորմատիվային ակտեր գրանցվեցին ՀՀ արդարադատության նախարարությունում:

